ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Կիրակի, սեպտեմբերի 19-ին, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի բարձր տնօրինությամբ, հընթացս Ս. Պատարագի տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: Պատարագիչ Գերաշնորհ Տ. Շահան արքեպս. Սվաճյանը քահանա ձեռնադրեց Ճեմարանի ուսանող Գևորգ սարկավագ Կողեցյանին՝ վերակոչելով նրան Տ. Անուշավան՝ ի հիշատակ երուսաղեմի հայոց Պատրիարքության նորոգ վախճանյալ միաբան Հոգեշնորհ Տ. Անուշավան ծ. վրդ. Ջղջանյանի: Խարտավիլակի պաշտոնը կատարեց Արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Երանյանը: Արարողությանը ներկա էր Արագածոտնի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Հավուր պատշաճի քարոզելով՝ Սրբազան Հայրն իր հայրական պատգամները տվեց նորընծա քահանային:

Նորընծա Տ. Անուշավան քահանան առաջնորդ Սրբազան Հոր կարգադրությամբ հոգևոր ծառայության կանցնի Բյուրականի Ս. Հովհաննես եկեղեցում:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ